

«ՆՈՐՄԱՏԻՎԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ (ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ) » ԾՐԱԳԻՐԸ

I. Ներածություն

1. Սույն «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում)» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 և 16-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 511-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 2.2.6-րդ կետի 9-րդ պարբերությունը, ՀՀ կառավարության 1999 թվականի մայիսի 26-ի «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 351 որոշումը, ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1523-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 51 արձանագրային որոշումը, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգին հավանություն տալու մասին» N17 արձանագրային որոշումը, ինչպես նաև ԱԴՀ շրջանակներում կնքված Միջկառավարական համաձայնագրերը (13 մարտի 1992թ. և 9 սեպտեմբերի 1994թ.), ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթները, Առևտրի Համաշխարհային Կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագիրը, ԵՄ-Հայաստան խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (ԽՀԱԱՀ) շրջանակներում նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (այսուհետ՝ ՆՏՓ) բազայի ընդլայնումը, Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցելու հետ կապված մարտահրավերները:

II. Ծրագրի նպատակը, խնդիրը և միջոցառման նկարագիրը

2. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի առաջնահերթ նպատակներից է քաղաքաշինական գործունեության իրավական դաշտը կարգավորող ՆՏՓ-երի՝ այդ թվում շինարարական նորմերի, տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների, կանոնների հավաքածուների (շիննորմերի ձեռնարկների) և այլ փաստաթղթերի մշակումը: Դրանց ներդաշնակեցումը միջազգային նորմերին հնարավորություն կստեղծի ապահովել Հայաստանի Հանրապետության շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիությունը միասնական շուկայում շրջանառվող շինարարական արտադրանքի և ծառայությունների հետ:

3. Ծրագրի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքաշինական ՆՏՓ-երի համակարգը եվրոպական և միջազգային նորմերին և ստանդարտներին համապատասխանեցման անհրաժեշտությամբ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող ՆՏՓ-երի համակարգը կանոնակարգվում է ՀՀՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ

փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերով: Նշված շինարարական նորմերով սահմանված են Հայաստանի Հանրապետությունում շինարարության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի համակարգի հիմնական սկզբունքները և ընդհանուր կառուցվածքը, դրանում ներառված փաստաթղթերի բովանդակությանը, կառուցվածքին, շարադրմանը և ձևավորմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև մշակման, հաստատման և կիրառման կարգը:

4. Քաղաքաշինական ՆՏՓ-երի համակարգը, հանդիսանալով քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց՝ սահմանում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, սեյսմակայունության, էներգաարդյունավետության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև նախագծման իրականացման և շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:

5. Հանրապետությունում գործող քաղաքաշինական ՆՏՓ-երի համակարգն իր մեջ ներառում է բնակավայրերի հատակագծման և կառուցապատման, շինարարական արտադրանքի, շենքերի և շինությունների նախագծմանն ու շինարարությանը ներկայացվող տեխնիկական պահանջների վերաբերյալ շինարարական նորմեր և ստանդարտներ, որոնք հիմնականում նախկին ԽՍՀՄ ժամանակահատվածում գործող ՆՏՓ-երն են և չեն համապատասխանում գործող միջազգային և եվրոպական ստանդարտներին: Հետևաբար դրա արդիականացման և տեխնիկատնտեսական արդի հարաբերությունների պայմաններում արտադրանքների, ծառայությունների և գործընթացների փոխադարձ ճանաչման նպատակով համապատասխանեցման կարիք ունեն:

6. ՆՏՓ-երի դաշտի արդիականացման և միջազգային ու եվրոպական նորմերին համապատասխանեցման ուղղությամբ հանրապետությունում 1993 թվականից սկսած տարվում են աշխատանքներ: Մշակվել և գործողության մեջ են դրվել հիմնադրությային բնույթի և տեղական սեյսմիկ ու բնակլիմայական առանձնահատկությունները հաշվի առնող Հայաստանի Հանրապետության մի շարք շինարարական նորմեր: Ներկայումս գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգում ընդգրկված շուրջ 997 փաստաթղթերից եվրոպական ու միջազգային նորմերին համահունչ մշակվել, արդիականացվել, տեղայնացվել և գործողության մեջ են դրվել թվով 436 նորմատիվ փաստաթղթեր, որոնցից 35-ը շինարարական նորմերն են:

7. Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով մշակվել, հաստատվել և գործողության մեջ են դրվել բնագավառի շուրջ 273 ՆՏՓ-եր, այդ թվում՝ միջազգային նորմերին ներդաշնակ հանրապետական ՆՏՓ-եր և ԱՊՀ անդամ պետությունների հետ համագործակցության շրջանակներում միջպետական շինարարական նորմեր և ստանդարտներ: Միջպետական տեխնիկական նորմավորման և ստանդարտացման աշխատանքներն իրականացվել են միջպետական համաձայնագրերի շրջանակներում՝ 1992 թվականի մարտի 13-ի «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառներում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» և 1994 թվականի սեպտեմբերի 9-ի «Շինարարական գործունեության համագործակցության մասին» Միջկառավարական Համաձայնագրերով, որտեղ նախատեսված է համատեղ մշակված միջպետական ՆՏՓ-երի տեղայնացում: Միջազգային նորմերին համապատասխան մշակվել են 3 տեխնիկական կանոնակարգեր և ներդաշնակեցվել են բնագավառի շուրջ 148 ստանդարտներ:

8. Վերջին երկու տարվա ընթացքում «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում)» ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից ֆինանսական միջոցներ չեն տրամադրվել, որի պատճառով հնարավոր չի եղել իրականացնել նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի արդիականացման աշխատանքներ:

9. ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ լրացումներ, փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 340-Ն որոշմամբ թվով 8 առաջնահերթ շինարարական նորմերի մշակման և

վերանայման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից ՀՀ քաղաքաշինության նախարարությանը հատկացվել է 49,672.0 հազ. ՀՀ դրամ:

10. Որպես գերակա խնդիր, առաջիկա ժամանակաշրջանում նախատեսվում է արագ գործընթացով իրականացնել գործող քաղաքաշինական նորմերը միջազգային նորմերին ներդաշնակեցնելու ուղղությամբ աշխատանքներ: Այն հնարավորություն կտա կատարելագործել նորմատիվ փաստաթղթերի համակարգը՝ միջազգային ստանդարտների և եվրամիության դիրեկտիվներին և կանոնակարգերին համահունչ նորմատիվ փաստաթղթերի բազայի ստեղծմամբ:

11. Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխանող քաղաքաշինական նորմերի համակարգի ստեղծումը նպատակաուղղված է.

1) մարդկանց կյանքի անվտանգության ապահովմանը, բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու պահպանմանը,

2) հատակազման և կառուցապատման որակական երաշխիքների ապահովմանը,

3) քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման լիարժեք իրավական մեխանիզմների ստեղծմանը,

4) քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, քաղաքաշինական գործունեության վերահսկողության, վիճելի հարցերի լուծման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծմանը,

5) 2017-2019 թվականների «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում) ծրագրում ներառված ՆՏՓ-երը չեն առնչվում պատմամշակութային արժեք ունեցող շենքերի և շինությունների ամրակայման, նորոգման, վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման և իրականացման աշխատանքների, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների պահպանության պահանջների սահմանման խնդիրներին:

12. 2017-2019 թվականների ընթացքում նախատեսվում է իրականացնել միջազգային նորմերին համահունչ թվով 8 ՆՏՓ-երի մշակում (տեղայնացում), որը կնպաստի քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար անհրաժեշտ ՆՏՓ-երի միասնական և առավել ամբողջական դաշտի ապահովմանը:

13. «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում)» ծրագրով նախատեսված միջոցառումների հետևողական իրականացումը կնպաստի նորմատիվ փաստաթղթերի համակարգի արդիականացմանը՝ խթանելով տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացմանը, միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի համակարգի կատարելագործմանը:

III. Շինարարության ոլորտի «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում)» ծրագրի համար պատասխանատու մարմինը ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն է:

IV. Ծրագրի կատարման ժամկետները և ֆինանսավորումը

14. 2017-2019 թվականների բյուջետային ֆինանսական հատկացումներն ըստ տարիների կազմում են. 2017 թվականին՝ 20,000.0 հազ. ՀՀ դրամ, 2018 թվականին՝ 20,000.0 հազ. ՀՀ դրամ, 2019 թվականին՝ 20,000.0 հազ. ՀՀ դրամ:

15. 2017-2019 թվականների «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում)» ծրագրում ներառված ՆՏՓ-երը մշակվելու են նմանատիպ աշխատանքների իրականացման առնվազն 3 տարվա փորձ ունեցող համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

16. Ստորև բերված է 2017-2019 թվականների «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում)» ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակացույցը՝ ըստ տարիների ֆինանսական միջոցների համամասնության:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման (տեղայնացման)

h/h	Փաստաթղթի անվանումը	Ընդամենը (հազ.դրամ)	2017թ.	2018թ.	2019թ.	Հղումը
1.	Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու (ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուի մշակում), (տեղայնացում)	6000.0	6000.0	-	-	ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 28-ի N 16-29 արձանագրային որոշման 3-րդ կետ
2.	Հասարակական շենքեր և շինություններ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում)	8000.0	2000.0	6000.0	-	Ելնելով՝ 1. Առողջապահության, սպորտի, հանգստի և ժամանցի համար նախատեսված շենքերի և շինությունների, 2. Մշակույթի ու արվեստի շենքերի և շինությունների, 3. Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքերի և շինությունների, 4. Կոմունալ տնտեսության շենքերի և շինությունների համար պահանջների սահմանման անհրաժեշտությունից:
3.	Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում)	13000.0	7000.0	6000.0	-	Հաշվի առնելով բետոնի և ամրանների դասակարգման փոփոխությունները և նոր տեխնոլոգիաների կիրառմամբ շինարարության արդիականացման պահանջները

4.	Շինարարական բետոնե և գետտեխնիկական կոնստրուկցիաներում ոչ մետաղական կոմպոզիտ ամրանների կիրառման կանոնների հավաքածու (ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուի մշակում), (տեղայնացում)	6000.0	-	-	6000.0	Ելնելով շինարարությունում կոմպոզիտ ամրանների կիրառելիության պահանջների ամրագրման անհրաժեշտությունից
5.	Պողպատե կոնստրուկցիաներ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում)	10000.0	5000.0	5000.0	-	Հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների կիրառմամբ շինարարության արդիականացման պահանջները
6.	Սառնաճկաձ պողպատե բարակապատ տրամատների կիրառմամբ շենքերի ու շինությունների նախագծման կանոնների հավաքածու (ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուի մշակում), (տեղայնացում)	5000.0	-	-	5000.0	Ելնելով շինարարությունում պողպատե բարակապատ տրամատների կիրառելիության պահանջների ամրագրման անհրաժեշտությունից և նոր տեխնոլոգիաների կիրառմամբ շինարարության արդիականացման պահանջներից
7.	Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում)	7000.0	-	3000.0	4000.0	ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի N 38-17 արձանագրային որոշման 2-րդ կետ
8.	Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում)	5000.0	-	-	5000.0	ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի N 38-17 արձանագրային որոշման 2-րդ կետ
	Ընդամենը	60000.0	20000.0	20000.0	20000.0	

17. Ծրագրի իրականացումը բարդ ու ժամանակատար գործընթաց է: Ծրագրով նախատեսված ՆՏՓ-երի համակարգի համալիրների փաստաթղթերն առավել արդիական և հրատապ են միջազգային տնտեսական համագործակցության համար:

18. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կատարել Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ փաստաթղթերի համեմատական վերլուծություն միջազգային և եվրոպական ստանդարտների հետ: Գործընթացը նախատեսում է օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում գործող ՆՏՓ-երի վերանայում – արդիականացում՝ միջազգային և եվրոպական ստանդարտներն ազգային ստանդարտի կարգավիճակով ներդնում, շահագրգիռ պետական և տարածքային կառավարման մարմինների ու մասնագիտացված կազմակերպությունների հետ համաձայնեցմամբ և ընդունմամբ:

19. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՆՏՓ-երի մշակման (տեղայնացման) Ծրագրի միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներ են հատկացվում հետևյալ ուղղություններով.

- 1) նոր նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում,
- 2) միջազգային և միջպետական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի տեղայնացում:

V. Ֆինանսական միջոցների չափը

20. Ստորև բերված են 2017-2019 թվականների Ծրագրում ներառված փաստաթղթերի մշակման (տեղայնացման) նախահաշիվները:

Նախահաշիվ
Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ
 ՀՀ շինարարական նորմերի մշակում (տեղայնացում)
 2017-2018թթ.

N	Աշխատանքի անվանումը	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1.	Աշխատավարձ (4 մարդ x 165000 x 13.6 ամիս)	8976.0
2.	Ընդամենը ուղղակի ծախսեր	8976.0
3.	Վերադիր ծախսեր	896.0
	Ընդամենը ինքնարժեք	9872.0
4.	Շահույթ	987.0
5.	Ընդամենը աշխատանքի արժեքը	10859.0
6.	ԱԱՀ	2172.0
7.	Ընդամենը	13000.0
8.	Որից՝ 2017 թվականին	7000.0

Նախահաշիվ
Հասարակական շենքեր և շինություններ
 ՀՀ շինարարական նորմերի մշակում (տեղայնացում)
 2017-2018թթ.

N	Աշխատանքի անվանումը	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1.	Աշխատավարձ (4 մարդ x 165000 x 8.3 ամիս)	5478.0
2.	Ընդամենը ուղղակի ծախսեր	5478.0
3.	Վերադիր ախսեր	548.0
	Ընդամենը ինքնարժեք	6026.0
4.	Շահույթ	603.0
5.	Ընդամենը աշխատանքի արժեքը	6629.0
6.	ԱԱՀ	1326.0
7.	Ընդամենը	8000.0
8.	Որից՝ 2017 թվականին	2000.0

Նախահաշիվ
Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող
անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության
ապահովման նախագծման կանոնների հավաքածու

ՀՀ շինարարական նորմերի կանոնների
 հավաքածուի մշակում (տեղայնացում)
 2017թ.

<i>N</i>	<i>Աշխատանքի անվանումը</i>	<i>Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)</i>
1.	Աշխատավարձ (3 մարդ x 165000 x 8.4 ամիս)	4158.0
2.	Ընդամենը ուղղակի ծախսեր	4158.0
3.	Վերադիր ծախսեր	416.0
	Ընդամենը ինքնարժեք	4570.0
4.	Շահույթ	457.0
5.	Ընդամենը աշխատանքի արժեքը	5027.0
6.	ԱԱՀ	1005.0
7.	Ընդամենը	6000.0

Նախահաշիվ
Շինարարական բետոնե և գեոտեխնիկական կոնստրուկցիաներում ոչ
մետաղական կոմպոզիտ ամրանների կիրառման կանոնների
հավաքածու

ՀՀ շինարարական նորմերի կանոնների
 հավաքածուի մշակում (տեղայնացում)
 2019թ.

<i>N</i>	<i>Աշխատանքի անվանումը</i>	<i>Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)</i>
1.	Աշխատավարձ (3 մարդ x 165000 x 8.4 ամիս)	4158.0
2.	Ընդամենը ուղղակի ծախսեր	4158.0
3.	Վերադիր ծախսեր	416.0
	Ընդամենը ինքնարժեք	4570.0
4.	Շահույթ	457.0
5.	Ընդամենը աշխատանքի արժեքը	5027.0
6.	ԱԱՀ	1005.0
7.	Ընդամենը	6000.0

Նախահաշիվ
Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ
 ՀՀ շինարարական նորմերի մշակում (տեղայնացում)
 2018-2019թթ.

<i>N</i>	<i>Աշխատանքի անվանումը</i>	<i>Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)</i>
1.	Աշխատավարձ (4 մարդ x 165000 x 7.3 ամիս)	4818.0
2.	Ընդամենը ուղղակի ծախսեր	4818.0
3.	Վերադիր ծախսեր	482.0
	Ընդամենը ինքնարժեք	5300.0
4.	Շահույթ	530.0
5.	Ընդամենը աշխատանքի արժեքը	5830.0
6.	ԱԱՀ	1166.0
7.	Ընդամենը	7000.0
8.	Որից՝ 2018 թվականին	3000.0

Նախահաշիվ
Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ
 ՀՀ շինարարական նորմերի մշակում (տեղայնացում)
 2019թ.

<i>N</i>	<i>Աշխատանքի անվանումը</i>	<i>Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)</i>
1.	Աշխատավարձ (3 մարդ x 165000 x 7 ամիս)	3465.0
2.	Ընդամենը ուղղակի ծախսեր	3465.0
3.	Վերադիր ծախսեր	346.0
	Ընդամենը ինքնարժեք	3811.0
4.	Շահույթ	381.0
5.	Ընդամենը աշխատանքի արժեքը	4192.0
6.	ԱԱՀ	838.0
7.	Ընդամենը	5000.0

Նախահաշիվ
Պողպատե կոնստրուկցիաներ
 ՀՀ շինարարական նորմերի մշակում (տեղայնացում)
 2017-2018թթ

N	Աշխատանքի անվանումը	Ընդհանուր արժեքը, (հազ. դրամ)
1.	Աշխատավարձ (4 մարդ x 165000 x 10.5 ամիս)	6930.0
2.	Ընդամենը ուղղակի ծախսեր	6930.0
3.	Վերադիր ծախսեր	693.0
	Ընդամենը ինքնարժեք	7623.0
4.	Շահույթ	762.0
5.	Ընդամենը աշխատանքի արժեքը	8382.0
6.	ԱԱՀ	1676.0
7.	Ընդամենը	10000.0
8.	Որից՝ 2017 թվականին	5000.0

Նախահաշիվ
Սառնաճկված պողպատե բարակապատ տրամատների կիրառմամբ
շենքերի ու շինությունների նախագծման կանոնների հավաքածուի
 ՀՀ շինարարական նորմերի կանոնների
 հավաքածուի մշակում (տեղայնացում)
 2019թթ

N	Աշխատանքի անվանումը	Ընդհանուր արժեքը, (հազ. դրամ)
1.	Աշխատավարձ (3 մարդ x 165000 x 7 ամիս)	3465.0
2.	Ընդամենը ուղղակի ծախսեր	3465.0
3.	Վերադիր ծախսեր	346.0
	Ընդամենը ինքնարժեք	3811.0
4.	Շահույթ	381.0
5.	Ընդամենը աշխատանքի արժեքը	4192.0
6.	ԱԱՀ	838.0
7.	Ընդամենը	5000.0

VI. Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշը

21. Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշ է համարվում աշխատանքների կատարման գնման պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված ժամկետներում և ֆինանսական միջոցների սահմաններում ՆՏՓ-երի պահանջների համապատասխանեցումը Եվրամիության երկրների շինարարության ոլորտում գործող նորմատիվ փաստաթղթերին ու դրանց կիրարկումն ապահովող եվրոպական ստանդարտներին:

22. Միջոցառման կատարման չափանիշ է հանդիսանում ՆՏՓ-երի մշակումը ՀՀ ստանդարտացման փաստաթղթերի ազգային համակարգի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխանությունը՝ համաձայն ոլորտը կանոնակարգող գործող քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարական նորմերի և կանոնների, հաշվի առնելով միջազգային փորձը:

VII. Ակնկալվող արդյունքները

23. Որոշակի արդյունքների հասնելու նպատակով 2017-2019 թվականներին նախատեսվում է իրականացնել միջազգային նորմերին համահունչ փաստաթղթերի մշակում (տեղայնացում), որը կնպաստի քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար անհրաժեշտ ՆՏՓ-երի միասնական և առավել ամբողջական դաշտի ապահովմանը:

24. 2017-2019 թվականների Ծրագրով նախատեսվող ՆՏՓ-երի մշակումն իրականացվելու է միջազգայնորեն ընդունված սկզբունքների շրջանակներում, ինչը հնարավորություն կտա համալրել անհրաժեշտ քաղաքաշինական ՆՏՓ-երի բազան: Հնարավոր կդառնա ապահովել ՀՀ շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիությունը միասնական շուկայում շրջանառվող ԵՄ և ԵԱՏՄ շինարարական արտադրանքի և ծառայությունների հետ, ինչը կնպաստի ներդրումային ծավալների մեծացմանը:

25. Միաժամանակ, շինարարական արտադրության ոլորտում միջազգային և եվրոպական նորմերին համահունչ ՆՏՓ-երի բազայի հենքի վրա ստեղծված շինարարական արտադրանքի և ծառայությունների համափոխարինելիությունը կխթանի հայրենական արտադրությանը, կնպաստի նոր տեխնոլոգիաների զարգացմանը և արտահանման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացմանը, նոր մեթոդական սկզբունքների ներդրմանը, շինարարական արտադրանքների, շենքերի ու շինությունների շահագործման բնութագրերի նորմավորմանը և դրանց ներկայացվող պահանջների սահմանմանը՝ ներառյալ անվտանգության ապահովման պահանջները: ՆՏՓ-երի արդիականացումը կնպաստի նաև քաղաքաշինության բնագավառում շենքերի ու շինությունների էներգաարդյունավետության բարելավմանը, շահագործման հարմարավետության ապահովմանը, անվտանգության ռիսկերի նվազեցմանը: